

կուլթեամբ մը իր հացը ճարելով ճաշարանի մը մէջ, որուն սեփականատէրը կ'ախորժէր իրմէ, զայն քավալիէր յայտարարելով իր աղջկան,- պատուակալ կասելէր, արտիստներու եւ գրողներու սեղաններուն ընկեր ու համեմ, եւ որ կը համբուրէր յաճախ «համառօտ» տրիբունը, քաջքշելով անոր «հասակաւոր» մօրուքը եւ կամրթելով պատանիի այտերը, ինչպէս կ'ընէին արտիստները իրենց ընկերացող շնիկներուն) անկէ կոպէկ մը անգամ չխորած: Ամէն մարդ՝ իր բանին: Միլիոնատէրը՝ իր փողաւարահին (իրն է բառը), ինտելիգենտն ալ՝ իր ժողովուրդին: Ճամբա՞ն:

-Պարզ էր այն օրերուն:

Երիտասարդութիւնը, զոր 96ի դէպքերը ըրած էին աւելի քան զզայտուն, ազգային ճակատի վրայ, ընկերային խմորումները համազգային մարզին մէջ, հմայքին տակն էին քանի մը շատ զօրաւոր անհատականութիւններու: Դէպի երկիր, դէպի հայ ժողովուրդը,-բնաբան ու դրօշակ բոլոր անոնց, որոնք կը ծնին տարբեր, տարօրինակ աստղի տակ, նեղ կը գտնեն աշխարհը իրենց շունչին ու փոփոխուելու ստիպողութեան մը տակ, կը նետուին անծանօթին, վտանգին, արկածին, յագեցնելու համար զիրենք տրորող ընդոճին ռոմանթիզմը: Այս դարուն սկիզբը այդ լեարդահար, թոքախտաժէտ տղաքը իրենց հիւանդութիւնները շալկած պիտի իյնան Աւստրալիա, Հարաւային Ափրիկէ, հոն ճարտարապետելու համար... կայսրութիւններ (Մէսիլ Ռոտտ): Հնդկաստա՞ն: Անշուշտ, գտնելու համար խուլ Արեւելքին զանխուլ հեշտանքներ...: Կովկասէ՞ն:

Գիրք մը անբաւական է ընդգրկելու ապրումները բոլոր ճեմարանականներուն, որոնք հոգեւոր կրթութեան պատրուակը այնքան սրտառուչ սրբութեամբ մը շահագործեցին իրենց ժողովուրդին սպասին: Այդ սերունդը անշուշտ տուաւ ականաւոր դէմքեր Հայաստանեայց եկեղեցւոյ ծառայութեան, բայց ինքզինքը արժեւորեց ազգային ազատագրութեան կրկէսով: Ոչ միայն գրողը,